

Ս. Մալխասյան

Հայկական ՍՍՌ ԳԱ Իսկական ամրամ

ՆԵՐՇԱՊՈՒՂ «ՌՄԲՈՍԵԱՆ» ԵՎ «ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ» ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ  
ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուզում եմ բացատրել վերոհիշյալ երկու բառերը, որոնք բոլորովին չեն բացատրված կամ սխալ են բացատրված:

Առաջին բառն է Ներշապուհ Ռմբոսեան: Սա պատահում է մի անգամ Եղիշեի մոտ (Ի. յեղանակ) Հայոց ժողովի նամակում, որով դիմում են Թեոդոս կայսեր, օգնական զորք խնդրելով Հազկերտի դեմ, որ ցանկանում էր բռնի կերպով զրադաշտական կրոնը մտցնել հայերի մեջ: Նամակն սկսվում է այսպես. «Յովսէփ եպիսկոպոս բաղում եպիսկոպոսակցոք իմովք և ամենայն զօրօք հայոց, Վասակ մարդպան և Ներշապուհ Ռմբոսեան, հանդերձ սպարապետաւ Վարդանաւ և ամենայն նախարարօք» և այլն: Ռմբոսեան բառը անհասկանալի է. նա ոչ անգի անուն է ե ոչ ազգատոհմի, որովհետև այդպիսի անունով մարդ ամենևին հայտնի չէ: Միենայն ժամանակ դա չէ կարող լինել ոչ անուն և ոչ ազգանուն. նա զրված է Վասակից հետո և Վարդանից առաջ, իսկ այս երկու անձը կոչված են ոչ ազգանուններով — ոչ Վասակ Սյունի, և ոչ Վարդան Մամիկոնյան, այլ ըստ պաշտոնների — մարզպան և սպարապետ: Նշանակում է, որ անծանոթ Ռմբոսեան բառն էլ որևէ պաշտոնի անուն է, այնքան բարձր պաշտոնի, որ զրված է անմիջապես մարզպանից հետո և սպարապետից առաջ: Այսպիսի պաշտոնյա կարող էր լինել միայն հայոց հազարապետը, որին հանձնվում էր տնտեսությունը ժողովրդի և մանավանդ շինականների վրա: Հազարապետի մասին Եղիշեն (Բ. յեղանակ) ասում է. «Հազարապետն աշխարհին իբրև զհայր վերականգն համարեալ էր աշխարհականացն քրիստոնէից», իսկ Փավստոս Բյուզանդ (Դ. Բ) ասում է. «Հազարապետութիւնն աշխարհատեան խնամակալութիւն, աշխարհաշէն, աշխարհատած դեհկանութիւն, շինականաշէն ազդն Գնունեաց, հազարապետն ամենայն երկրին»:

Ուրեմն Ռմբոսեան նշանակում է հազարապետ, ժողովրդի և շինականների տնտեսության խնամակալ:

Բառի ծագումը անորոշ է: Նրա մեջ նկատելի է առաջին մասը, ում, ավելի ընդարձակ ձևով՝ ուամ, որ նշանակում է երամ, ժողովուրդ, որից և այժմ գործածական ուամիկ բառը: Նույն արմատից պատահում է «ուամական նամակ» Գահնամակի մեջ: Իսկ բոսեան կամ բոսիան մնում է անծանոթ, հավանորեն պահլավական մի բառ է: Բայց ամբողջ բառի նշանակությունը ցույց է տալիս, որ դա եղել է ուամկաց խնամակալ կամ նման մի բան:

Իսկ Թե ինչու հայերը իրանց նամակում դանց են արել գործածել սովորական հազարապետ բառը՝ սա կարելի է բացատրել նրանով, որ հազարապետը հունարեն տառացի Թարգմանութեամբ կլինեի խալիպ, որ հունարեն նշանակում է հազար զինվորի պետ կամ պետական ամենաբարձր պաշտո-

նյա, երկրորդ անձը թաղավորից հետո (ինչպես Պարսկաստանում Միրնեբ-սին մեծ հազարապետը), և չէր տա հայոց հազարապետի նշանակությունը:

Երկրորդ բառն է Բուզաճիարաճ պատմութիւնք: Այս բառը պատահում է Փափստոս Բուզանդի պատմության չորս դպրութիւնների վերնագիրներում: Բառը, անտարակույս, ամենցված է բուզանդ բառից: Բսկ ինչ է նշանակում բուզանդը:

Ուշագրավ է, որ Ղ. Փարպեցին, որ առաջին անգամ անվանում է Փավստոսին՝ երկու անգամ նրան կոչում է Բուզաճիարաճ, չնայելով որ ինքը այս բառը ստուգաբանում է Բյուզանդիա անունից, Փափստոսին համարում է Բյուզանդիայում ունած և քաղաքն էլ կոչում է Բյուզանդիոս: Նշանակում է բուզանդ հիմնական ձև է եղել, և Փարպեցին հավատարմությամբ պահպանել է այն:

Գալով բառի ծագման՝ ես ենթադրում եմ, թե սա պահլավական բառ է, ծագած երկու արմատից, bhu և դանդ: Առաջին արմատը հնդկաեվրոպական արմատ է, սանսկրիտ bhu, սլավոններեն бѹ և бѹ, ինչպես և իրաներեն bav և bu, որ նշանակում է լինել, լինելություն, եղելություն, և այս նշանակությամբ համապատասխանում է նույն արմատից կազմված սլավոնական бѹти, бѹтии բառերին, որոնք նշանակում են ժողովրդական բանաստեղծություն, վեպ: Բառի երկրորդ արմատը՝ դանդ, զանդիկ բառն է, որ նշանակում է մեկնություն, բացատրություն: Ուրեմն ամբողջ բառը միասին, բուզանդ, պետք է նշանակե մեկնություն ժողովրդական վեպերի, մեկնիչ վեպերի, մի քիչ ընդարձակ կերպով՝ վեպերի բացատրիչ, վիպասան: Այսպիսի բացատրությունը լավ համապատասխանում է Փափստոսի պատմության, որ հյուսված է ժողովրդական զրույցների արտադրությունից:

Այս բուզանդ բառը իմ կարծիքով Փափստոս հեղինակի աշուղական կոչումն է պահլավներեն լեզվով, ինչպես մինչև այժմ էլ մեր աշուղների սովորությունն է եղել պարսկական կամ տաճկական կոչումներ ընդունել իրանց համար, ինչպես Սայաթ Նովա, Միսկին Բուրջի, Զիվանի և այլն:

Բուզանդարան բառը ռացատրվում է բուզանդ բառով. ինչպես տաղարան, երգարան նշանակում են տաղերի, երգերի ժողովածու, այնպես էլ բուզանդարան նշանակում է բուզանդի. այսինքն ժողովրդական վեպերի ժողովածու: Բուզանդարան բառի կողքին դրված պատմութիւնք բառը (հոգնակի ձևով) հայերեն թարգմանություն է Բուզանդարան բառի, որովհետև Փափստոսի գրքում պատմություն նշանակում է պատմվածք, զրույց, վեպ:

Վերահիշյալ իմ երկու ենթադրությունների ստուգման համար ես հարկ համարեցի դիմել իմ վաղեմի բարեկամ պրոֆ. Ռուբեն Աբրահամյանին, հմուտ իրանագետի, որ Թեհրանի համալսարանում դասախոսում էր պահլավներեն լեզուն, նրանից խնդրեցի իմանալ, թե իմ ենթադրությունները արդարանում են պահլավների հայտնի բառապաշարով: Նրա պատասխանն ամակից բերում եմ հետևյալ կտորները. «Ձեր Բուզանդ բառի (ինչպես նաև Ռմրոսեանի) բացատրությունը շատ սրամիտ է և օրիգինալ. միայն սանսկրիտ bhu և սլավոնական бѹ (бѹ)-ից առաջ, կարծում եմ, պետք է զետեղել նաև իրանական bav և ներկայինը bu նույն իմաստով: Բուզանդի ամբողջությունը հիշեցնող բառ չգտա... բայց կարծում եմ ձեր բացատրությունը հիշած հավելումով այնքան գոհացուցիչ է, որ այդ անհրաժեշտ չէ,

մանավանդ որ բառը կազմված է հայկական հողի վրա և ուրեմն նման բառի գոյութիւնը պարսկերենում պարտադիր չէ:

Ռմբոսեան բառի երկրորդ մասը բոսեան հավանականորեն առաջ է եկել bav արմատի bušyant ածական ձևից, «եկող», «դարձող» նշանակութեամբ, որ եթե չի լինի բան է ալիւացնում բառի առաջին մասի վրա՝ զոնե չի էլ խաթարում իմաստը: Իսկ ոմբոսեանը հիշեցնող բառ չգտա իրաներենում:

Ինչպես պրոֆ. Ռուբեն Արրահամյանի այս նամակից երեւում է՝ նա համաձայն է իմ տված մեկնութիւններին, միայն հայտնում է, որ իրաներենում չեն պատահում Ռմբոսեան և Բուզանդ բառերը: Սա կամ նշանակում է թե իմ բացատրութիւնները սխալ են և կամ որ պահլավերեն աղքատ գրականութեան մեջ չեն պահպանվել այս բառերը: Ռմբոսեան բառի իմ տված մեկնութիւնը ես համարում եմ կասկածից դուրս: Նվազ ստուգութիւն քանի Բուզանդ բառի մեկնութիւնը: Բայց երկու դեպքումն էլ պահլավերենը կարող է կորցրած լինել, կամ եղած գրականութեան մեջ առիթ չունենալ գործածելու այս բառերը: Մեզ մոտ այս բառերը պատահում են հինգերորդ դարում, որ ժամանակից հարյուրավոր պահլավերեն բառեր մուծվել են հայերենի մեջ, որոնց պահլավական ձևերը չեն ավանդված պահլավերեն սակավթիվ գրականութեան մեջ, որոնց մասին տես մանրամասն և Աճառյանի «Հայոց լեզվի պատմութիւն», Ա, եր. 290—292: Այսպիսի չհիշատակված բառերի շարքից կարելի է համարել Ռմբոսեան և Բուզանդ բառերի պահլավական ձևերը: